

Վարդապատէս ԵՏԲ Առաջին Կորնայ

06 ՅՈՒԼԻՍ 2008

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԱՌԱՋԻՆ  
ՆԱՄԱԿԷՆ  
(1.25-30)

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Կատարեալ եղէ՛ք (Ա)	Էջ 2
Բարեկեցութեան Աւետարան	Էջ 4
Յիսուսի Մկրտութիւնը	Էջ 5
Ժամանակացոյց եւ Ծանուցում	Էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ  
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ  
(3.16-4.1)

Այսպէս կ'ըսէ Տէրը. «Քանի որ Սիոնի աղջիկները հպարտացան, բարձրավիզ կը քալեն, ցանկալից ակնարկներ կը նետեն, մանրաքայլ կը շարժին եւ ոստոստուն կը քալեն, որպէս պատիժ՝ պիտի նուաստացնեմ Սիոնի իշխանուհիները եւ գիրենք պիտի մերկացնեմ իրենց զարդերէն»:

Այն օրը Տէրը պիտի հանէ անոնց փառաւոր զգեստները եւ ոտքերուն մեհեւանդները, մազի հիւսքերը, գլխազարդ ծամակներն ու պսակակալները եւ վզի մահիկները, ճակատի գիւղերը, օղերը, ապարանջաններն ու շղարշէ շալերը, ապարօշները, քօղէքներն ու մետաքսէ գօտիները, անուշահոտերու տուփերը, յուռութքները, մատանիներն ու քթամանեակները, դիպակէ պատմուճանները, վերարկուները, հայելիները, բեհեզէ զգեստները, խոյրերն ու քօղերը: Իրենց հպարտաւոր փոխարէն՝ անուշահոտութեան տեղ գարշահոտութիւն պիտի ունենան, մէջքի կամարներուն տեղ՝ չուանէ գօտի, գեղեցկահիւս մազերուն տեղ՝ կնտութիւն, ոսկեհիւս դիպակներուն տեղ՝ քուրճ պիտի հագնին եւ գեղեցկութեան տեղ ամօթ պիտի ունենան: Անոնց սիրելի եւ գեղեցիկ զաւակները սուրով պիտի իյնան, անոնց կտրիճները պատերազմի մէջ պիտի սպաննուին:

Աստուծոյ տնօրինութիւնը, որ յոյներ յիմարութիւն կ'որակեն, իմաստնագոյն է քան մարդկային որեւէ իմաստութիւն. եւ Աստուծոյ խաչը, որ հրեաներ տկարութիւն կը համարեն, աւելի զօրեղ է քան մարդկային ամէն զօրութիւն:

Եղբայրներ, դուք ձեզմէ դատեցէք. ի՛նչ էիք երբ Աստուած ձեզ կանչեց: Ձեզմէ քանի՞ն իմաստուն, հզօր կամ ազնուատոհմ էր մարդկային չափանիշներով: Բայց Աստուած դիտմամբ ընտրեց այն ինչ որ այս աշխարհը յիմար եւ անիմաստ կը գտնէ, անով իմաստունները ամօթով ձգելու համար.

ոեւէ մարդ չպարծեմայ Աստուծոյ առջեւ

ընտրեց այն ինչ որ այս աշխարհը տկար կը համարէ, անով հզօրները ամէցնելու համար.

եւ ընտրեց այն ինչ որ այս աշխարհը անարժէք, արհամարհելի եւ ոչնչութիւն կը համարէ, անով ոչնչացնելու համար այս աշխարհի մեծութիւնները: Եւ ասիկա՝ որպէսզի ոեւէ մարդ չպարծենայ Աստուծոյ առջեւ, որովհետեւ Աստուած ի՛նքն է որ ձեզ բերաւ Քրիստոսի միացուց, եւ մենք Քրիստոսով ճանչցանք Աստուծոյ իմաստութիւնը եւ գտանք մեր արդարութիւնը, սրբութիւնը եւ փրկութիւնը:

Աստուած ի՛նքն է որ ձեզ բերաւ Քրիստոսի միացուց, եւ մեք Քրիստոսով ճանչցանք Աստուծոյ իմաստութիւնը եւ գտանք մեր արդարութիւնը, սրբութիւնը եւ փրկութիւնը:


ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ  
(18.10-14)

**Մ**եր Տէրը Յիսուս Քրիստոս կ'ըսէ.-  
«Զգո՛յշ, մի՛ արհամարհէք այս  
փոքրիկներէն ոեւէ մէկը. գիտցէք որ անոնց  
հրեշտակները երկինքի մէջ միշտ կը տեսնեն  
իմ երկնաւոր Հայրս: Որովհետեւ մարդու  
Որդին եկաւ կորսուածը փրկելու համար:

«Ի՞նչ կը կարծէք. եթէ մարդ  
մը հարիւր ոչխարներէն  
մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր  
իննսուսինը ոչխարները  
լերան վրայ եւ չ'երթա՞ր  
փնտռելու կորսուած ոչ-  
խարը: Այո՛, կ'երթայ: Եւ եթէ  
պատահի որ գտնէ, վստահ  
եղէք որ աւելի կ'ուրախանայ այդ ոչխարին  
համար, քան թէ իննսուսինը ոչխարներուն  
համար որոնք կորսուած չեն: Նմանապէս  
ալ Հայրս, որ երկինքի մէջ է, չ'ուզեր որ այս  
փոքրիկներէն մէկը կորսուի»:

Հայրս, որ  
երկինքի մէջ  
է, չ'ուզեր  
որ այս  
փոքրիկներէն  
մէկը կորսուի:

«Նոյ իր  
դարուն  
մարդոց մէջ  
արդար ու  
կատարեալ  
մարդ մըն էր.  
Նոյ Աստուծոյ  
հետ փայեց»



ՎԱՐԴԱՎԱՌԷՆ ԵՏՔ Ա. ԿԻՐԱԿԻ  
(Ծննդան ԲՅՉՏՐՈՒԹԻՒՆԵՐ - ԹԻ 24)

Ի՞՞  
I

«ԿԱՏԱՐԵԱԼ ԵՂԷՔ» (Ա)

Յիսուս երկու առիթներով «կատարեալ ըլլալ» ու  
խօսք ըրած է: Մատթէոսի  
աւետարանը երկուքն ալ  
ուսի. առաջինը Լերան  
Քարոզի «Թշնամիները  
Սիրելի» անուանուած բաժնին  
եզրափակիչ պատգամն է.  
«Արդ, դուք կատարեալ եղէք,  
ինչպէս որ ձեր երկնաւոր  
Հայրը կատարեալ է» (Մտ  
5.48), իսկ երկրորդը մեծահարուստ երիտասարդին

«Արդ, դուք  
կատարեալ եղէք,  
ինչպէս որ ձեր  
երկնաւոր Հայրը  
կատարեալ է»

հետ խօսակցութեան մէջ արտայայտուած է. «Եթէ  
կ'ուզես կատարեալ ըլլալ, գնա՛, ինչ որ ունիս՝  
ծախէ եւ աղքատներուն տուր. այդպիսով երկինքի  
մէջ գանձ պիտի ունենաս, եւ յետոյ՝ հետեւէ ինծի»  
(Մտ 19.21: Այս խօսակցութիւնը Մարկոսի եւ  
Ղուկասի աւետարաններն ալ ունին, բայց միայն  
Մարկոս աւետարանիչ «կատարեալ ըլլալ» ու խօսքը  
արձանագրած է: Հետաքրքրական է եւ նշանակալից,  
որ Մատթէոս եւ Ղուկաս աւետարանիչները  
Մարկոսէ քաղած են մեծահարուստ երիտասարդին  
պատմութիւնը, սակայն միայն առաջինն է, որ  
պահած է «կատարեալ» ըլլալու նիւթը, մինչ  
երկրորդը չէ պահած:

Թէեւ Մատթէոսի կողմէ շատ չարծարծուած,  
սակայն հաւանական է, որ հիմնական կարեւորութիւն  
մը կը ներկայացնէր անիկա:

Անկասկած Մատթէոսի համար «կատարեալ  
ըլլալ» ու հասկացողութիւնը  
իր արմատը ունէր Ս. Գրային  
աւանդութեան մէջ եւ ոչ թէ  
այլ տեղ՝ օրինակ յատկապէս  
յունական մտածողութեան:  
Ուստի, պիտի անդրադառնամ  
կատարելութեան Ս. Գրային  
ընկալումին, թէ՛ Հին  
Կտակարանեան եւ թէ՛ Նոր  
Կտակարանեան:

Հին Կտակարանին մէջ  
առաջին անձը, որ կատարեալ  
որակուած է Նոյ Նահապետն է: Ծնունդներու Գիրքի  
6-րդ գլխուն սկիզբը կը կարգանք. «Նոյ իր դարուն  
մարդոց մէջ արդար ու կատարեալ մարդ մըն էր.  
Նոյ Աստուծոյ հետ փայեց» (Ծն 6.9): Արդար եւ  
կատարեալ մարդ ըլլալը անանջատելի է Աստուծոյ  
հետ «քալել» էն: Ան որ Աստուծոյ հետ կը քալէ՝  
արդար եւ կատարեալ մարդ է, կ'ըսէ մէջբերուածը:

Ո՞վ է արդար մարդը: 11-րդ սաղմոսը կ'ըսէ.  
«արդար Տէրը արդարութիւնը կը սիրէ, անոր երեսը  
ուղիղին կը նայի» (11.7): Ուրեմն, արդարութեան  
մարդը կամ արդար մարդը ուղիղն է:

Իսկ ո՞վ է ուղիղ մարդը: Ուղիղը ան է, որ սրտով  
Տիրոջ յարած է (Հմմտ  
Բ. Մն 16.9), եւ Անոր  
կամքը կը գործադրէ  
(Հմմտ Սղ 143.10):

Արդար մարդու  
մասին այս ամփոփ  
բացատրութեամբ  
առայժմ բաւա-  
րարուիմ, եւ դենմ  
հարցումը. Ո՞վ է  
կատարեալ մարդը:  
Նոյ Նահապետի  
զրուածքին մէջ կա-

ՔԱՍՏՈՒԾՈՅ ԻՆԵՄ ԲԱՅԵԼ  
ՔՊԱՍՏՈՒԾ ԻՐԵՆԻ  
ԽՕՍԱԿԻԿ ՈՒՆԵՆԱԼ  
ՔԱՍՏՈՒԾՈՅ  
ԻՆԱՊԱՆՈՒԿԻ  
ՔԱՍՏՈՒԾՈՅ ՎՍՏԱԿԻԼ  
ՔՏԵՐԸ ՊԱՉՏԵԼ  
ՔԱՍՏՈՒԾՈՅ ԻՆԵՄ  
ՈՒՍՏՈՎ ԿԱՊՈՒԾ  
ԸՆԱԼ

տարեալ մարդու սահմանում մը չէ տրուած: Հետեւաբար, տիպարին կատարեալ մարդ ըլլալը հասկնալու համար ճիշդ կ'ըլլայ տեսնել անոր մասին նկարագրութեան այն կէտերը, որոնք զինք Աստուծոյ կ'առնեն:

Առաջին կէտը՝ Աստուծոյ հետ քաղելն է, այսինքն՝ չապականիլը եւ անիրաւութիւն չընելը (հմտ Ծն 6.9-12).

Երկրորդը՝ զԱստուած իրեն խօսակից ունենալը (տե՛ս նոյն 6.13-21, 7.1-4, 8.15-17, 9.1-7, 8-11, 12-16, 17).

Երրորդը՝ Աստուծոյ հնազանդիլը (տե՛ս նոյն 6.22, 7.5).

Չորրորդը՝ Աստուծոյ վստահիլը (Աստուած կը խոստանայ զինք եւ իր ընտանիքը փրկել, նաեւ կենդանական աշխարհը ամբողջական կորուստէ զերծ պահել - 6.18-20 -, եւ Նոյ կը վստահի).

Հինգերորդը՝ Տէրը պաշտելը (տե՛ս նոյն 8.20).

Վեցերորդը՝ Աստուծոյ հետ ուխտով կապուած ըլլալը (տե՛ս նոյն 9.1-17), այսինքն՝ Անոր հետ փոխադարձ խոստումով ապրիլը. Աստուծոյ կողմէ խոստումին էութիւնն է՝ «ամէն մարմին» կորստեան չմատնել, իսկ մարդուն կողմէ խոստումին էութիւնն է՝ խորունկ պատասխանատուութիւն կեանքի արժէքին նկատմամբ: Ինչպէս կը տեսնուի, այս ուխտը կեանքի սրբազան բնոյթը կը շեշտէ:

Այս կէտերը ցոյց կու տան բարոյական ուղղութիւն մը, որուն աղբիւրը Աստուած ինքն է: Բայց այս կէտերէն որո՞նք յատկանիչերն են արդար մարդուն եւ որո՞նք կատարեալ մարդը կը յատկանշեն:

Աստուածաշնչական հասկացողութեամբ արդար մարդը բոլոր այս յատկանիչերը ունի: Արդ, ինչպէ՞ս

հասկնալ «կատարեալ մարդ» բացատրութիւնը: Անիկա համարժէ՞ք է «արդար մարդ» ըսուածին, թէ տարբեր բան մըն է: Նոյի մասին վկայութիւնը՝ թէ ան արդար եւ կատարեալ մարդ էր տարբերութիւն մը կը մտածէ, անկասկած: Բայց ինչի՞ մէջ կը կայանայ անոր «կատարեալ մարդ» ըլլալը, երբ «արդար մարդ»ը բնորոշող յատկանիչեր են իր պատմութեան մէջ մեր կարգացածները: Այստեղ մեզի օգնութեան հասնողը՝ իր «կատարեալ եղէք» խօսքէն առաջ ըսուած

Յիսուսի բացատրութիւնն է. «եթէ միայն ձեր ազգակիցներուն հետ բարեկամութիւն ընէք, հեթանոսներէն աւելի ի՞նչ ըրած կ'ըլլաք» (Մտ 5.47): Ուրեմն, «կատարեալ մարդ» ըլլալը կը կայանայ «աւելի»ին մէջ: Հետեւաբար, «կատարեալ մարդ»ը «արդար մարդ»ն է, որուն արդարութիւնը «աւելի» է, այսինքն՝ կը ճառագայթէ իբր ոչ-սովորական

արդարութիւն կամ պիտի ըսէի՝ իբր աստուածամերձ արդարութիւն: Այդ «աւելի»ն մարդկային կամքէ չի գար: Մարդ էակը իր կամքով ինքզինք չի կրնար կատարեալ ընել: Աստուած

ինքն է, որ կատարեալ կը համարէ մարդ էակին արդարութիւնը: Ինչպէս իր ընթացքին արդարութիւնը մարդ էակը անձնապէս ինք չէ, որ կ'որոշէ, այլ Աստուած. նոյնպէս ալ իր ընթացքին կատարելապէս արդար

ըլլալը ինք չէ, որ կ'որոշէ, այլ Աստուած: Սաղմոս 14(13).1-3-ի համաձայն՝ մէկ հատիկ արդար մարդ չկայ: Այս հաստատումին վրայ, Պօղոս առաքեալ գրած է թէ՛ «մարդ հաւատքով կ'արդարանայ» (Հռ 3.28), եւ թէ՛ Աստուած ինքն է, որ կ'արդարացնէ (Նոյն հմր 23):

Մարդուն ընկիւքը Աստուծոյ հետ քաղելն է Նոյի պէս:

II

Օրուայ Ս. Գրային ընթերցումները Անուանակոչութեան յաջորդած Չորրորդ Կիրակիին ընթերցումներն են. Եսայի Մարգարէէն՝ 3.16-4.1: Կորնթացիներուն Առաջին Նամակէն՝ 1.25-30: Մատթէոսի Աւետարանէն՝ 18.10-14:

Առաջին ընթերցումը. Մարգարէին միջոցաւ Աստուած կը յայտնէ Երուսաղէմի գլխուն գալիք անկումը: Այս հատուածը անկումին բարոյական պատճառներէն մէկը կը յիշէ, որ է վերնախաւի օրիորդներուն եւ իշխանուհիները ինքնահաւան հպարտութիւնը:

Երկրորդ ընթերցումը. Պօղոս առաքեալ կը շեշտէ, որ Աստուծոյ առջեւ ոեւէ մէկը պէտք չէ պարծենայ: Աշխարհի մեծութիւնները ոչինչ են: Աստուած այս աշխարհի յիմար ու անիմաստ գտածը «դիտմամբ» կ'ընտրէ, իմաստուն կարծուածները «ամօթով ձգելու համար», նաեւ կ'ընտրէ տկարները՝ հզօր կարծուածները «ամչցնելու համար»: Չպարծենալ:

Երրորդ ընթերցումը. Յիսուս փոքրիկները չարհամարհելու կոչ կ'ուղղէ: Իսկ ըստ հատուածին՝ որո՞նք են «փոքրիկներ»ը: Կորստուածներն են անոնք: Եւ Աստուած զանոնք չի լքեր, այլ անոնց փրկութիւնը կ'ուզէ:

Այս երեք ընթերցումները կը պատգամեն հրաժարիլ ինքնահաւան հպարտութենէ, ինքզինք մեծ չհամարել, եւ տեսնել որ Աստուած արիւմարիւնութեամբ եւ մերժուածներուն հետ է կամ անոնց փրկութիւնը կ'ուզէ:

Պօղոս առաքեալ գրած է թէ՛ «մարդ հաւատքով կ'արդարանայ», եւ թէ՛ Աստուած ինքն է, որ կ'արդարացնէ

«կատարեալ մարդ»ը «արդար մարդ»ն է, որուն արդարութիւնը «աւելի» է, այսինքն՝ կը ճառագայթէ իբր ոչ-սովորական արդարութիւն կամ պիտի ըսէի՝ իբր աստուածամերձ արդարութիւն:

Հովութ ԳԶ



## ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՒԱՏՔ ԲԱՐԵԿԵՑՈՒԹԵԱՆ ԱՒԵՏԱՐԱՆ (Prosperity Gospel)

*Հարցում. Աստուած կ'ուզէ որ երջանիկ ըլլամ, ուրեմն կ'ուզէ որ բարեկեցիկ կեանք մը ապրիմ չէ՞:*

**Պատասխան.** Տրամաբանական է որ եթէ կը հաւատանք թէ Աստուած կը սիրէ մեզ՝ մեր լաւութիւնը կ'ուզէ, ուրեմն նաեւ կը հաւատանք թէ Ան կ'ուզէ որ ըլլանք նիւթապէս անկախ եւ՝ բարեկեցիկ: Այս հաւատամքին վրայ կը հիմնուին այսօր շատ մը եկեղեցիներ: Քարոզելով այսպէս ըսած բարեկեցութեան «խոստմնալից» աւետարանը, անոնք հմայած են միլիոնաւոր մարդիկ, որոնց կեանքի երազն է տնտեսական յաջողութեամբ նուանել երջանկութիւնը: Թէ ի՞նչ է անոնց հասկցած երջանկութիւնը այդ ուրիշ հարց է: Բայց հետաքրքրականը այն է թէ, հարցումովդ երջանկութիւնը ուղղակիօրէն կը կապես բարեկեցիկ կեանք մը ապրելու հետ:

Յստակօրէն առաջնահերթութիւններու խախտում մը կայ հոս: Յիսուս ըսաւ. «... մի՛ մտահոգուիք եւ ըսէք. “Ի՞նչ պիտի ուտենք, ի՞նչ պիտի խմենք կամ ի՞նչ պիտի հագնինք”» (Մտ 7.31): «Նախ խնդրեցէք որ Աստուծոյ արքայութիւնը գայ եւ աշխատեցէք իր կամքը կատարել, եւ Աստուած այդ բոլորը աւելիով պիտի տայ ձեզի» (Մտ 7.33):

Մի՛ նախընտրեք նուէրը քան զԱստուած, որ պարգեւիչ Աղբիւրն է: Ընդհանրապէս գոյութիւն ունի զանազանելու դժուարութիւնը՝ շօշափելի նուէրին եւ զայն պարգեւող անշօշափելի Աստուծոյ միջեւ: Այդ յամառ կուրութիւնը կոսպաշտութիւն է. նախ՝ Իր թագաւորութիւնը, Իր կամքի գործադրութիւնը եւ ապա Իր նուէրները: Բայց կը հարցնես թէ ինչու արժանի չե՞ս նիւթական բարօրութեան:

Արժանի կրնաս ըլլալ բայց պատրա՞տ ես: Զե՞ս նախընտրեք հարստութիւն չունենալ

եթէ այդ յաւելեալ բեռ է «առաւել կեանք»ի ճանապարհին: Ծուլութեան, թուլամորդութեան կամ մարտահրաւէրէ փախուստի անցազիր չէ այս, այլ իրապաշտօրէն ճանչնալու ինքզինք, անձնական ուժերն ու տկարութիւնները:

Ո՞ր մէկը աւելի դիւրին է. թեթեւ ճամբորդելը թէ ծանրութեամբ: Որքան ծանրութիւնդ շատնայ այդքան կը դժուարանայ ճամբորդութիւնդ: Նոյնիսկ եթէ բեռնակիրներ գտնես ծանրութիւնդ շալկելու, անոնց վրայ հսկելու պատասխանատուութիւնը կ'իյնայ քու ուսերուդ: Յիսուս ըսաւ. «Շատ աւելի դժուար է որ պարանը ասեղի ծակէն մտնէ, քան հարուստը՝ Աստուծոյ արքայութիւնը» (Ղկ 18.25): Բայց նաեւ շարունակեց «Ինչ որ անկարելի է մարդոց համար՝ կարելի է Աստուծոյ համար» (27): Ուրեմն եթէ ծանրութիւնդ՝ հարստութիւնդ շատ է, յիշէ որ պատասխանատուութիւնդ ալ շատ է: Պէտք է դիմես Աստուծոյ որ անկարելին կարելի դարձնէ, քեզի իմաստութիւնը տայ բարիքին համար լաւագոյնս տնտեսելու ունեցումովդ՝ առանց վտանգելու հոգեւոր կեանքդ: Միշտ յիշէ թէ միակ պարգեւիչը Աստուած Ինքն է: Այսօր քեզի յանձնուածը կրնայ վաղը ետ առնուիլ եւ ուրիշին տրուիլ: «Սիրտիդ մէջ մի՛ ըսեր թէ “այս հարստութիւնը իմ կարողութեամբս ու ձեռքիս ոյժով վաստկեցայ”»: Հապա յիշէ՛ Տէրը՝ քու Աստուածդ - քանի որ հարստութիւն վաստկելու համար քեզի կարողութիւն տուողը ա՛ն է...» (2 Օր 8. 17-18): Թէ «ինչո՞ւ կ'ուզես հարստանալ» հարցումին պատասխանը կարելու է որ Աստուծոյ կամքին մէջ ըլլայ:

Հետաքրքրականօրէն Յիսուս նաեւ ըսած է. «Զէք կրնար թէ՛ Աստուծոյ ծառայել եւ թէ՛ դրամին» (Ղկ 16.13): Միակ ձեւը դրամը կամ նիւթական հարստութիւնը հաշտեցնելու Աստուծոյ հետ, զայն իր արժանի տեղը դնելն է, այսինքն՝ զայն Աստուծոյ գործին ծառայեցնելը:

«Տիրող օրհնութիւնն է որ կը հարստացնէ, եւ անոր հետ ցաւ չի խառներ» (Առ 10.22): Ի՞նչ արժէք ունի հարստութիւնդ երբ զայն կարօտեալին հետ բաժնել չես գիտեր, երբ միշտ աւելիին կը տեսչաս եւ սիրտդ երբեք ունեցածովդ չի գոհանար:

Աստուած կ'ուզէ որ գոհունակ սիրտ ունենանք եւ միշտ փառք տանք Իրեն:

Իսկական երջանկութիւնը գոհունակ սրտին մէջ է:

«Տիրող  
օրհնութիւնն  
է որ կը  
հարստացնէ,  
եւ անոր  
հետ ցաւ չի  
խառներ»:

Կ.Ն.

# ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԵՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

Հեղինակ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ  
Խմբագիր՝ Գառնիկ Ք. Գ.

## ՅԻՍՈՒՍԻ ՄԱՐՏՈՒԹԻՒՆ:

«Այդ օրերուն Յիսուս Գալիլիայէն Յորդանան գետ եկաւ Յովհաննէսի մօտ՝ անկէ մկրտուելու համար: Բայց Յովհաննէս ընդդիմացաւ անոր, ըսելով.- Ե՛ս պէտք ունիմ քեզմէ մկրտուելու, եւ դո՞ւն ինձի կու գաս:»

Յիսուս պատասխանեց.- Հիմա թո՛ղ տուր, որ այսպէս ըլլայ, որովհետեւ այսպիսով կատարած պիտի ըլլանք Աստուծոյ արդար կամքը:

Եւ Յովհաննէս թոյլ տուաւ: Յիսուս մկրտուելէ ետք՝ անմիջապէս ջուրէն դուրս ելաւ: Եւ ահա երկինքը բացուեցաւ, եւ տեսաւ Աստուծոյ Հոգին, որ աղաւնիի նման կ'իջնէր եւ կու գար իր վրայ: Եւ ահա երկինքէն լսուեցաւ ձայն մը, որ կ'ըսէր.- Այդ է իմ սիրելի Որդիս, որուն ես հանեցայ» (3.13-17):

Յիսուս իր հրապարակային գործունէութեան կը սկսէր 27/28-ին: Նախքան իր գործունէութիւնը՝ ան պիտի մկրտուէր Յովհաննէս Մկրտիչի ձեռամբ եւ ապա Սատանայէն փորձուելու համար՝ Ս. Հոգիին կողմէ անապատ տարուէր (տե՛ս նոյն աւետարանին յաջորդ գլխու 1-11 համարները: Մարկոսի մօտ Յիսուսի մկրտութիւնն ու փորձութիւնը 1.9-13-ի մէջ են, իսկ Ղուկասի մօտ՝ մկրտութիւնը 3.21-22-ի մէջ է, եւ փորձութիւնը՝ 4.1-13-ի մէջ: Յովհաննէս աւետարանիչ Յիսուսի մկրտութեան բաժին մը ունի - 1.29-34. սակայն փորձութեան դրուագը չէ ներառած իր աւետարանին մէջ):

Յիսուս երբ Յովհաննէսի մօտ գնաց մկրտուելու՝ ինչո՞ւ ան ընդդիմացաւ եւ «Ե՛ս պէտք ունիմ քեզմէ մկրտուելու, եւ դո՞ւն ինձի կու գաս», ըսաւ:

Նախապէս տեսանք, որ ինք վկայութիւն մը տուած էր Յիսուսի կատարելիք մկրտութեան մասին, եւ ըսած՝ թէ ան Ս. Հոգիով եւ կրակով պիտի մկրտէ (Մտ 3.11): Յովհաննէս Մկրտիչ իր կատարած մկրտութիւնը կը հասկնար որպէս նախապատրաստութիւն «Ս. Հոգիով եւ կրակով» մկրտութեան: Հետեւաբար, ան կը մտածէր, թէ ժամանակը հասած է, որ իր մկրտութիւնը դադրի եւ ինք ըլլայ առաջինը անոնցմէ, որոնք նոր մկրտութեան արժանի պիտի ըլլան: Սակայն Յիսուս կ'առարկէր, որովհետեւ կը տեսնէր, թէ

իր մկրտուելովը «Աստուծոյ արդար կամքը կատարուած» պիտի ըլլար: Յիսուս ո՛չ թէ կը մերժէր Յովհաննէս Մկրտիչի ցանկութիւնը, այլ պարզապէս Աստուծոյ կամքը գործադրելու կը նայէր:

«Աստուծոյ արդար կամքը» բացատրական թարգմանութիւնն է բնագրի «փասան տիքաթօսունէն»ին, որ մեր հայերէրը թարգմանած են «զամենայն արդարութիւն»:

Արդարութիւնը բառը մէկէ աւելի հասկացողութիւններ եւ գործածութիւններ ունի Աստուածաշունչին մէջ:

Կրնայ նշանակել այն վիճակը, որ մեղքէն, յանցանքէն կամ օրինազանցութենէ զերծ է:

Կրնայ նշանակել նաեւ

Աստուծոյ այն պարգեւը, որով անձ մը Անոր աչքին արդար կը համարուի: Ըստ Աստուածաշունչին, մարդիկ Աստուծոյ առջեւ բացարձակապէս արդար չեն կրնար ըլլալ, բայց Աստուած զանոնք արդար կը համարէ: Աստուած ինք շնորհքը կ'ընէ

մարդիկը արդարացնելու: Օրինակ՝ Աբրահամ Նահապետի պարագան: Ծնունդներու Գիրքը կ'ըսէ, թէ ան հաւատաց Աստուծոյ եւ Աստուած ատիկա իրեն արդարութիւն համարեց (Ծն 15.6): Պօղոս առաքեալ այս մասին հետեւեալը գրած է. «Արդ, ի՞նչ ըսենք Աբրահամի, մեր ազգին նախահօր մասին. ի՞նչպէս արդարացաւ: Եթէ Աբրահամ իր գործերով արդարացած ըլլար՝ կրնար պարծենալ, բայց ո՛չ Աստուծոյ քով: Ի՞նչ կ'ըսէ Ծնունդներու Գիրքը. Աբրահամ հաւատաց Աստուծոյ, եւ այդ հաւատքին համար ալ Աստուած զինք արդար համարեց: Չէ՞ որ որեւէ գործ կատարած մարդու համար իր վարձատրութիւնը շնորհք չի համարուիր, այլ՝ իրաւունք. իսկ անոր որ որեւէ գործ կատարած չէ եւ սակայն կը հաւատայ Աստուծոյ, որ մեղաւորը կ'արդարացնէ, անոր պարագային հաւատալը արդարութիւն կը համարուի» (Հռ 4.1-5):

Կրնայ նշանակել նաեւ Աստուծոյ կամքը կամ Աստուծոյ ամբողջ ծրագիրը, որ մարդուն փրկութիւնն է:

... մարդիկ  
Աստուծոյ առջեւ  
բացարձակապէս  
արդար չեն  
կրնար ըլլալ,  
բայց Աստուած  
զանոնք արդար  
կը համարէ:

Աբրահամ  
հաւատաց  
Աստուծոյ,  
եւ այդ  
հաւատքին  
համար ալ  
Աստուած  
զինք արդար  
համարեց:

«Չամենայն արդարութիւն» արտա-  
յայտութիւնը՝ մարգարէներուն միջոցաւ  
կանխաւ փոխանցուած Աստուծոյ կամքին  
իրականացումը կը հասկնայ: Յիսուսի խօսքը  
արդարութեան երրորդ հասկացողութեամբ  
ըսուած է:

Բայց ի՞նչ էր Աստուծոյ կամքը Յիսուսի  
մկրտութեամբ, կամ՝ Յիսուս ինչո՞ւ պիտի  
մկրտուէր: Սակայն նախքան այդ՝ Յիսուս  
մկրտուելու պէտք ունէ՞ր: Գիտենք որ  
Յովհաննէս Մկրտիչի մկրտութիւնը ապաշ-  
խարութեան համար էր: Յիսուս ապաշխարելու  
պէտք ունէ՞ր: Ինք մեղաւոր մըն էր, որ իբրեւ  
նշան ապաշխարութեան մկրտուէր:

Նոր կտակարանը բազմաթիւ անգամներ  
կը հաստատէ, որ Յիսուս անմեղ էր: Օրինակ՝  
Պօղոս առաքեալ գրած է. «Աստուած մեզի  
համար մեղքի պատարագ ըրաւ Քրիստոսը, ան՝  
որ բնաւ մեղք չէր գործած, որպէսզի մենք անոր  
միանալով արդարանանք Աստուծոյ համար»  
(Բ. Կր 5.21):

Արդ, Յիսուս որպէս անմեղ՝ պէտք չունէր  
Յովհաննէս Մկրտիչի մկրտութեան: Ատով

Քրիստոս  
մկրտուեցաւ ոչ թէ  
ինքն իրեն համար,  
այլ բոլոր մարդոց  
փոխարէն.  
ան իր վրայ  
առաւ ամբողջ  
մարդկութեան  
մեղքերը եւ  
մկրտուելով  
զանոնք սրբեց:

հանդերձ ան ըսաւ.  
«Հիմա թո՛ղ տուր որ  
այսպէս ըլլայ եւ այլն»:  
Քրիստոսի մկրտութիւնը  
փոխանցուած էր  
մկրտութիւն մըն է.  
այսինքն՝ Քրիստոս  
մկրտուեցաւ ոչ թէ ինքն  
իրեն համար, այլ բոլոր  
մարդոց փոխարէն. ան  
իր վրայ առաւ ամբողջ  
մարդկութեան մեղքերը  
եւ մկրտուելով զանոնք

սրբեց: Հետեւաբար, Յիսուսի մկրտութիւնը  
իր երկրաւոր առաքելութեան փրկագործական  
առաջին քայլն էր: Ուստի, անիկա Աստուծոյ  
կամքին կամ ծրագրին կատարման առաջին  
արարքն էր: Եւ Աստուծոյ կամքը կամ ծրագիրը  
արդարութիւնն իսկ է:

Յիսուսի մկրտութիւնը շատ կարեւոր է նաեւ  
որպէս կատարում աստուածային առաջին  
խոստումին: Ի՞նչ էր այդ խոստումը:

Ծնունդներու Գիրքին մէջ մարդ էակի  
անհնազանդութենէն եւ անկումէն ետք,  
Աստուած դատապարտութեան երեք վճիռներ  
տուած է. առաջին վճիռը օձին ուղղուած  
էր: Նոյն վճիռին մէջ խոստում մըն ալ կայ:

Մէջբերեմ վճիռին հետեւեալ հատուածը. «Քու  
ու կնոջ մէջտեղ, քու սերունդիդ ու անոր  
սերունդին մէջտեղ թշնամութիւն պիտի դնեմ:  
Ան քու գլուխդ պիտի ջախջախէ եւ դուն  
անոր գարշապարը պիտի խայթես» (Ծն 3.15):  
Այս հատուածով մեզի կը տրուի մեղքին վրայ  
յաղթանակին առաջին խոստումը: Կը խօսուի  
կնոջ սերունդին մասին: «Սերունդ» բառը  
այստեղ կարելի է հասկնալ երկու իմաստով.  
Իբր ամբողջ մարդկութիւնը, եւ իբր Քրիստոսի  
մասին կանխաստութիւն (տեսնել Պօղոս  
առաքեալի Գաղատացիներուն Նամակին  
4.4-ը. «Աստուած աշխարհ զրկեց իր Որդին,  
որ կնոջմէ մը ծնաւ»): Հետաքրքրական է,  
որ առաքեալը չ'ըսեր «մարդէ մը ծնաւ», կամ  
չ'ըսեր՝ «Մարիամէ ծնաւ»: Շատ հաւանական է,  
որ առաքեալը «կնոջմէ մը ծնաւ» գրած ատենը՝  
ի մտի ունեցած է Ծն 3.15-ի աստուածային  
խոստումը): Ըսուածն է, թէ ամբողջ  
մարդկութիւնը զօրութիւնը պիտի ունենայ  
մեղքին վրայ յաղթանակ տանելու. նաեւ թէ՛  
Քրիստոս ինք պարտութեան պիտի մատնէ  
Չարը: Առանց Աստուծոյ օգնականութեան  
մարդ էակը կարողութիւնը չունի մեղքին  
յաղթելու: Եւ այդ պատճառով է, որ Աստուած  
իր Որդին պիտի զրկէր մարդոց փրկութեան  
համար: Աստուծոյ խոստումը ի սկզբանէ  
Քրիստոսաբանական է:

Մկրտութեամբ Յիսուս յաղթանակ տարաւ  
առաջին օձին վրայ. այսինքն՝ մարդկութեան  
մեղքերը իր վրայ առնելով  
սրբեց զանոնք: Աստուծոյ  
փրկագործական խոս-  
տումը մարգարէներուն  
միջոցաւ փոխանցուելով  
հասած էր մինչեւ Քրիս-  
տոս, որուն առաքելութեան  
իւրաքանչիւր քայլը Աստուծոյ արդարութեան  
հաստատման պիտի ծառայէր:

Այս հասկացողութեամբ է, որ Յիսուսի  
մկրտութիւնը Աստուծոյ կամքին լրման  
առաջին քայլն էր:

Յովհաննէս Մկրտիչ ընդդիմանալով չէր  
անդարդառնար, թէ խորքին մէջ Աստուած  
շատ աւելի մեծ բան մը ունի քան միայն  
անհատի մը մկրտութիւնը: Ան չէր կրնար  
տեսնել, թէ մկրտուելու համար Յիսուսի իրեն  
գալը՝ Աստուծոյ կամքին հնազանդութիւն էր  
եւ առաջին քայլն էր մարդ էակի փրկութեան:

Եւ Յովհաննէս պիտի մկրտէր Յիսուսը: Յիսուս

Մկրտութեամբ  
Յիսուս  
յաղթանակ  
տարաւ առաջին  
օձին վրայ

երբ ջուրէն դուրս ելաւ, կ'ըսէ աւետարանիչը, ահա երկինքը բացուեցաւ եւ ան «տեսաւ Աստուծոյ հոգին, որ աղաւնիի նման կ'իջնէր եւ կու գար իր վրայ»: Ատկէ ետք երկինքէն «ձայն մը» կը լսուէր. այդ ձայնը Աստուծոյ ձայնն էր, որ Յիսուսը կը ներկայացնէր որպէս իր սիրելի Որդին:

Այստեղ հարցի մը կ'ուզեմ անդրադառնալ: Մեկնութիւնը գիտութիւն մըն է: Սակայն յաճախ կը տեսնենք, որ գիտութեան անունով կամայական կարծիքներ շրջան կ'ընեն: Արեւմուտքի մէջ մեկնութեան գործեր հրապարակ ելած են, որոնք Յիսուսի մեսիական գիտակցութեան մասին կը խօսին: Ըստ անոնց, Յիսուս իրբը մեսիաառաքելութեան գիտակցած է ժամանակի ընթացքին: Այդ գիտակցութեան մեկնակէտ էր իր մկրտութիւնը: Արեւմուտքի մտածողութեան շատ մը հոսանքները այնքան կը շեշտեն Յիսուսի մարդկութիւնը, որ անոր աստուածութիւնը կը նուազեցնեն: Եւ կը ծագի հարցումը՝ թէ Յիսուս պարզ մա՞րդ մըն էր, կամ թէ իր առաքելութեան ամբողջական գիտակցութիւնը ունէ՞ր թէ ոչ:

Նոր Կտակարանը մեզի բացարձակ յստակութեամբ ցոյց կուտայ, որ Յիսուս իր կեանքի բոլոր հանգրուաններուն՝ իր առաքելութեան եւ արարքներուն փրկագործական բնոյթին կատարեալ գիտակցութիւնը ունէր: Հետեւաբար բոլոր «գիտական» պիտակով մեկնութիւնները, որոնք Յիսուսի մօտ մեսիական գիտակցութեան

Յիսուս իր կեանքի բոլոր հանգրուաններուն, իր առաքելութեան եւ արարքներուն փրկագործական բնոյթին կատարեալ գիտակցութիւնը ունէր:

զարգացման մասին կը խօսին՝ զուտ են թ ա կ ա յ ա կ ա ն կարծիքներ են եւ Նոր Կտակարանեան հիմք չունին: Յովհաննէսի աւետարանը ամենէն շեշտուած ձեւով կը ներկայացնէ Յիսուսի կանխագիտութիւնը իր առաքելութեան կ ա պ ու ա ծ

դէպքերուն: Նոյնը կը տեսնենք նաեւ համատեսական աւետարաններուն մէջ, թէ եւ նուազ շեշտուած կերպով:

Վերագառնալով մեր նիւթին: Մատթէոսի աւետարանին մէջ Յիսուս ինք կը տեսնէ Աստուծոյ Հոգիին աղաւնակերպ էջքը եւ իր վրայ գալը: Նոյնպէս Մարկոսի աւետարանին մէջ (Մկ 1.10): Ղուկասի

նկարագրութիւնը լայն բռնուած է եւ կը թելադրէ, որ գայն թէ՛ Յիսուս տեսաւ եւ թէ կրնայ ուրիշ մը կամ կրնան ուրիշներ տեսած ըլլալ. ան գրած է. «Յիսուս ալ մկրտուեցաւ: Երբ Յիսուս կ'աղօթէր, երկինքը բացուեցաւ եւ Ս. Հոգին տեսանելի կերպարանքով աղաւնիի պէս իջաւ անոր վրայ» (Ղկ 3.21-22): Չորրորդ աւետարանին մէջ Յովհաննէս Մկրտիչ կը վկայէ եւ կ'ըսէ. «Տեսայ Հոգին, որ աղաւնիի պէս կ'իջնէր երկինքէն եւ կը հանգչէր անոր վրայ: Այո՛, ես չէի ճանչնար զինք, բայց ան՝ որ զիս զրկեց ջուրով մտրտելու, ըսաւ ինծի.՝ Որուն վրայ որ տեսնես, թէ կ'իջնէ ու կը հանգչի Հոգին, անիկա է որ Ս. Հոգիով պիտի մկրտէ» (ՅՅ 1.32-33):

Այս նկարագրութիւնները մեզի կը յայտնեն, որ Ս. Հոգիին էջքը թէ՛ Յիսուս ինք տեսած էր եւ թէ Յովհաննէս Մկրտիչ: Ուրեմն, Յիսուսի վրայ Ս. Հոգիին էջքը ո՛չ թէ անոր մեսիական գիտակցութեան արթնացման համար էր, այլ որպէսզի Յովհաննէս Մկրտիչի վկայութեան ճամբով յայտնուէր Ս. Երրորդութեան ներկայութիւնը: Յիսուսի մկրտութեան ատեն ո՛չ թէ ան մինակ էր, այլ իրեն հետ էին Հայրն Աստուած եւ Ս. Հոգին Աստուած:

Ս. Հոգիի էջքը ուրիշ բան ալ կ'ըսէ՞: Յորդանանի ջուրերուն վրայ Ս. Հոգիին իջնելը կը յիշեցնէ նախքան երկինքի եւ երկիրի ստեղծումը՝ անոր շրջիլը «Ջուրերուն վրայ» (Ծն 1.1-2): Յիսուսի մկրտութեան առիթով Ս. Հոգիին էջքը կը նշանակէ նաեւ, թէ նոր ստեղծագործութիւնը կը սկսէր: Եւ ինչպէս նախկին ստեղծագործութիւնը Ս. Երրորդութեան արարքն էր, նոր ստեղծագործութիւնն ալ Ս. Երրորդութեան արարքն է: Նոր ստեղծագործութիւնը կը սկսէր Յիսուսի մկրտութեամբ, այլ խօսքով՝ Յիսուսի մկրտութեամբ մարդկութեան վերանորոգումը կը սկսէր:

Նոր ստեղծագործութիւնը կը սկսէր Յիսուսի մկրտութեամբ, այլ խօսքով՝ Յիսուսի մկրտութեամբ մարդկութեան վերանորոգումը կը սկսէր:

(Շարունակելի 8)



**Յաջորդ շաբաթուայ  
Ժամանակացոյժ**

Յինգշաբթի, 10 Յուլիս 2008

11.00 > Աղօթածողով՝  
Ս. ՅԱԿՈՒ քոյրերու ժողով

Կիրակի, 13 Յուլիս 2008

09.30 > Առաւօտեան ժամերգութիւն  
11.00 > Ս. Եւ անմահ Պատարագ

Կիրակի 13 Յուլիս 2008-ի ժամը  
12.00-ին, Անթիլիասի մէջ նոր  
օրհնուած միւռնով՝ ջրօրհնէքի  
արարողութիւն պիտի կատարուի  
եկեղեցոյս մէջ:

**ՀԻՒԱՆՈՒՆԵՐՈՒ ԱՅԺԵՂՈՒԹԻՒՆ**  
Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ.  
Տ. Գառնիկ Բինյ. Գոյունեանին.  
514 331 5445 x203 կամ 514 909 5203 քիւին:

Սոյն թերթիւր ե-նամակով ստանալու  
ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԷՆ ՈՒՊՈՒՐԿԵՅՔԷ  
eglise58@sourphagop.com-ըս

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՅԱՏՈՒԿ  
ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ  
ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆԸ  
Կը վերսկսի

ՇԱԲԱԹ 6 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2008-ԻՆ



**ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ՁԵՐ  
ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԵՐԸ ԱՆԽՕՐՕՔ  
ԿԱՏԱՐԵՅՔԷ ԿԱՊՈՒԷՂՈՎ  
ԵԿԵՂԵՅՈՅՍ ԳՐԱՍԵՆԵԱԿ**

**ՀԱՄԱՅՆԵՐԱ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
ԵԿԵՂԵՅԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ**

**ԲՅՅ Է  
ԵՐԿՈՒԵԱԹԻՒՆ ՈՒՐԲԱԹ  
ԺԱՄԸ 8.30-ԷՆ 16.00**

**ՀԱՃԵՅՔԷ ԿԱՊՈՒԷՂ ԸՆԴՏՈՒՂԱՐԻՆ՝  
514 331 5445 x202  
ԿԱՄ ՀՆՈՒԻՒՆ՝  
514 331 5445 x203  
ԿԱՄ ԳՐԵՂ ՀԵՏԵԷՎ Ե-ՀԱՍՅԷՐՆ՝  
eglise58@sourphagop.com**